ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/93

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ.Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 04.11.2020թ.),

քննելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/5Ն» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից 30.10.2020թ. ներկայացված (03.11.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/93 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 30.10.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարարության կողմից վերջինիս կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/5Ն» ծածկագրով բաց մրցույթ:

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, 19.10.2020թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն:

«ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/5Ն» ծածկագրով բաց մրցույթով հայտերի բացումը տեղի է ունեցել 19.10.2020թ.:

«ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/5Ն» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 27.10.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության (կցվում է) 1-ին կետով արձանագրվել է, որ Ընթացակարգով հայտերի բացումը տեղի է ունեցել 19.10.2020թ., ժամը 10:00-ին:

Նույն արձանագրության 4.1 կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է հետևյալը. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (19.10.2020թ.) ընդգրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Համաձայն լիազորված մարմնի կողմից հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 21.10.2020թ. հանվել է ցանկից՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 02.10.2020թ. թիվ ԵԴ/26033/02/20 որոշման հիման վրա՝ մինչև տվյալ գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Նույն արձանագրության 5.2. կետով որոշում է կայացվել մերժել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի հայտը:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայց է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 12.08.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ԼՕ-2020/179 որոշումն

անվավեր ճանաչելու պահանջով: Որպես հայցի ապահովման միջոց՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն խնդրել է կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 12.08.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ԼՕ-2020/179 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ինչպես նաև պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից հանել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Նշված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը՝ թիվ ԵԴ/26033/02/20 քաղաքացիական գործի շրջանակներում, Դատարանի կողմից 16.09.2020թ. ամբոջությամբ բավարարվել է:

02.10.2020թ. Դատարանի կողմից տրվել է կատարողական թերթ (կցվում է):

14.10.2020թ. թիվ ՍՄ-20/7 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ կցելով 02.10.2020թ. Դատարանի կողմից տրված կատարողական թերթը և խնդրել անհապաղ կատարել թիվ ԵԴ/26033/02/20 քաղաքացիական գործով Դատարանի կողմից 16.09.2020թ. կայացրած որոշման պահանջները:

21.10.2020թ. ՀՀ ֆինանսերի նախարարի առաջին տեղակալ Կ.Բրուտյանը գրավոր հայտնել է «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին, որ ի կատարումն Դատարանի որոշման՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 21.10.2020թ. հանվել է կայքում հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկից (կցվում է):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործով դատարանը կայացնում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտեր:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դատական ակտի և դատարանի պահանջների չկատարումը հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայց է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 12.08.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ԼՕ-2020/179 որոշումն անվավեր ճանաչելու պահանջով: Որպես հայցի ապահովման միջոց՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն խնդրել է կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 12.08.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ԼՕ-2020/179 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ինչպես նաև պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից հանել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Նշված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը թիվ ԵԴ/26033/02/20 քաղաքացիական գործի շրջանակներում Դատարանի կողմից 16.09.2020թ. ամբոջությամբ բավարարվել է և նույն օրը մտել է օրինական ուժի մեջ:

02.10.2020թ. նշված որոշման հիման վրա Դատարանի կողմից տրվել է կատարողական թերթ:

Դեռևս 14.10.2020թ. N ՍՄ-20/7 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ կցելով 02.10.2020թ. Դատարանի կողմից տրված կատարողական թերթը, և խնդրել անհապաղ կատարել թիվ ԵԴ/26033/02/20 քաղաքացիական գործով Դատարանի կողմից 16.09.2020թ. կայացրած որոշման պահանջները:

Սակայն միայն 21.10.2020թ. ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ.Բրուտյանը գրավոր հայտնել է «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին, որ ի կատարումն Դատարանի որոշման՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 21.10.2020թ. հանվել է հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկից:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք.

Ընթացակարգի գհատող հանձնաժողովը «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտը մերժել է հանձնաժողովի 27.10.2020թ. տեղի ունեցած նիստի արձանագրությամբ, մինչդեռ հենց հանձնաժողովն է տվյալ արձանագրությամբ արձանգրել, որ համաձայն լիազորված մարկմնի կողմից հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 21.10.2020թ. հանվել է ցանկից՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 02.10.2020թ. թիվ ԵԴ/26033/02/20 որոշման հիման վրա՝ մինչև տվյալ գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ստացվում է մի իրավիճակ, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը դեռևս 16.19.2020թ. կայացրած որոշմամբ կասեցրել է «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 12.08.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ԼՕ-2020/179 որոշումը՝ մինչև սույն դատական վճռով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը, սակայն գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Դատարանի կողմից արդեն իսկ կասեցված (փաստացիորեն արդեն չգործող) որոշումը՝ մերժել է Ընկերության հայտը այն հիմնավորմամբ, թե «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու պահին ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մինչդեռ ակնհայտ է, որ եթե Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը դեռևս 16.09.2020թ. կայացրած որոշմամբ կասեցրել է «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը՝ մինչև սույն դատական վեճով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը, ուստի հայտը ներկայացնելու պահին՝ 19.10.2020թ. իրավաբանակ ուժ չունի

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշումը:

Հետևաբար գնահատող հանձնաժողովի կողմից Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/26033/02/20 քաղաքացիական գործով Դատարանի կողմից 16.09.2020թ. կայացրած որոշման և վերոհիշյալ որոշման մասին իրազեկված լինելու պայմաններում «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի հայտը մերժելը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի պահանջների խախտում: Վերոհիշյալը ոչ իրավաչափորեն հանգեցրել է «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին ՍՊԸ-ի Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված գնման գործընթացին մասնակցելու իրավունքի իրացման սահմանափակմանը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ուշադրություն դարձնել այն կարևոր փաստի վրա, որ գնահատող հանձնաժողովը իր 27.10.2020թ. արձանագրությամբ է արձանագրել, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հանվել է ցանկից՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 02.10.2020թ. թիվ ԵԴ/26033/02/20 որոշման հիման վրա: Վերոհիշյալից ակնհայտ է, որ առնվազն 02.10.2020թ. (իրականում որոշումը եղել է 16.09.2020թ., 02.10.2020թ. Դատարանի կողմից տրվել է կատարողական թերթ)՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն արդեն զրկված չի եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից:

Այնինչ, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 16.09.2020թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու մասին որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից՝ այն է 16.09.2020թ.., և այն ենթակա չէ բողոքարկման և ենթակա է անհապաղ կատարման:

Այսինքն՝ նման փաստական հանգամանքներում և նման արձանագրության բովանդակության պայմաններում գնահատող հանձնաժողովը չպետք է արձանագրեր, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (19.10.2020թ.) ընդգրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ հենց ինքն է վկայակոչել Դատարանի 02.10.2020թ. որոշումը, իսկ

www.gnumner.am կայքում ցանկում ՍՊԸ-ի անունը հրապարակված լինելը դեռևս տվյալ մասնակցին չի դարձնում մասնակցության իրավունքից զրկված սուբյեկտ:

Բողոքներ քննող անձին խնդրում են նաև նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովի կողմից առանձին չի կազմվել հայտերի բացման և հայտերի գնահատման արձանագրություններ: Ընդհանուր ընթացակարգի համար կազմվել է մեկ միասնական արձանագրություն՝ 27.10.2020թ. նիստի, որը իր մեջ ներառել է թե՛ հայտերի բացումը, թե՛ գնահատումը և թե՛ հաղթող մասնակից որոշելը և անգործություն սահմանելը, մինչդեռ հայտերի բացումը տեղի է ունեցել 19.10.2020թ.: Ակնհայտ է, որ այս մասով էլ առկա է Օրենքի 33 և 34 հոդվածների պահանջների խախտում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից վերջինիս կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/5Ն» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել հանձնաժողովի 27.10.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.11.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է ներկայացված բողոքը:

2. <u>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 06.11.2020թ. թիվ ՀԲ//31151-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/5Ն ծածկագրով գնման ընթացակարգ, որի շրջանակում մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն: Ներկայացված հայտը մերժվել է, քանի որ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ /19.10.2020թ/ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն ընդգրկված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: 21.10.2020թ. հանվել է ցանկից՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 02.10.2020թ. թիվ ԵԴ/26033/02/20 որոշման հիման վրա մինչև տվյալ գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.11.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/93 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/93 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/5Ն» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2020թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (19.10.2020թ.) ընդգրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Համաձայն լիազորված մարմնի կողմից հրապարակված

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 21.10.2020թ. հանվել է ցանկից՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 02.10.2020թ. թիվ ԵԴ/26033/02/20 որոշման հիման վրա մինչև տվյալ գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի 30.10.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 06.11.2020թ. թիվ ՀԲ//31151-2020 գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, հրապարակում է լիազորված մարմինը:***

ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

(…)

2. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են դրանց հասցեատերերի համար:

3. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (հետայսու՝ Օրենսգիրք) 124-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայցադիմումը ներկայացվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում՝

1) հայցադիմումը վարույթ ընդունելու մասին.

2) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.

3) հայցադիմումը վերադարձնելու մասին:

Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ***, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

Օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ***պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելը:***

Օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարանը քննում է առանց դատական նիստ հրավիրելու ոչ ուշ, քան այն ստանալու հաջորդ օրը, ***իսկ եթե միջնորդությունը ներկայացվել է հայցադիմումի հետ, ապա հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ:***

(…)

3. Միջնորդության քննության արդյունքով դատարանը կայացնում է՝

1) հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշում:

(…)

4. Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդության կապակցությամբ դատարանի որոշումը ոչ ուշ, քան այն կայացնելու հաջորդ օրն ուղարկվում է միջնորդությունը ներկայացրած անձին:

Օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման հիման վրա կազմված ***կատարողական թերթը դատարանն անհապաղ ուղարկում է հարկադիր կատարման:***

2. ***Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը կատարվում է անհապաղ՝*** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***կատարողական թերթը տրվում է դատարանի*** վճիռների, դատավճիռների, ***որոշումների*** և դատարանի արձակած վճարման կարգադրությունների հիման վրա:

Նույն հոդվածի 18-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ ***անհապաղ կատարման ենթակա դատական ակտի հարկադիր կատարման համար կատարողական թերթը տրվում է անհապաղ:***

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված ժամկետում դատարանը կատարողական թերթ տալիս է՝ այն անհապաղ էլեկտրոնային եղանակով ուղարկելով հարկադիր կատարման ծառայություն:***

Նույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ ***կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողը կայացնում է որոշում: Հարկադիր կատարողը որոշումը կայացնում է դրա համար հիմք հանդիսացող հանգամանքները հայտնի դառնալու օրվանից եռօրյա ժամկետում, եթե օրենքով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ:***

Նույն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն***՝ հարկադիր կատարողի՝ իր իրավասության սահմաններում կայացրած որոշումները պարտադիր են բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար ու ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:***

Այսպես, «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից 02.09.2020թ. ներկայացվել է հայցադիմում՝ ընդդեմ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 12.08.2020թ. թիվ ՍՑ-ԼՕ-2020/179 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Ներկայացված հայցադիմումով Ընկերությունը միևնույն ժամանակ միջնորդել է կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 12.08.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ԼՕ-2020/179 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, և պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից հանել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ներկայացված հայցադիմումը 16.09.2020թ. ընդունվել է վարույթ և նույն օրը դատարանի կողմից որոշում է կայացվել թիվ ԵԴ/26033/02/20 քաղաքացիական գործով ներկայացված հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու վերաբերյալ, այն է՝ կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանի 12.08.2020թ. թիվ ՍՑ-ԼՕ-2020/179 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, և պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից հանել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, որի հիման վրա 02.10.2020թ. տրվել է թիվ ԵԴ/26033/02/20 կատարողական թերթը, որը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ն.Հովսեփյանի կողմից ***էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է 13.10.2020թ.:***

02.10.2020թ. տրված թիվ ԵԴ/26033/02/20 քաղաքացիական գործով կատարողական թերթը 13.10.2020թ. մուտքագրվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, որի հիման վրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի կողմից 14.10.2020թ. հարուցվել է թիվ 06702951 կատարողական վարույթը:

Նույն օրը՝ 14.10.2020թ., Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից որոշում է կայացվել, ի կատարումն ՀՀ Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ԵԴ/26033/02/20 քաղաքացիական գործով 02.10.2020թ. տրված կատարողական թերթի, կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 12.08.2020թ. թիվ ՍՑ-ԼՕ-2020/179 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Լիազորված մարմնի կողմից «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 21.10.2020թ. հանվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/5Ն» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 19.10.2020թ. հայտ է ներկայացրել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2020թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (19.10.2020թ.) ընդգրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Համաձայն լիազորված մարմնի կողմից հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 21.10.2020թ. հանվել է ցանկից՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 02.10.2020թ. թիվ ԵԴ/26033/02/20 որոշման հիման վրա մինչև տվյալ գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը և տվյալ քաղաքացիական գործի շրջանակներում տրված կատարողական թերթը, որի արդյունքում արձանագրել է հետևյալը.

1. Դատարանի կողմից 02.09.2020թ. ներկայացված հայցադիմումը վարույթ է ընդունվել 16.09.2020թ. և նույն օրը կայացվել որոշում:

2. Օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման հիման վրա կազմված ***կատարողական թերթը դատարանն անհապաղ ուղարկում է հարկադիր կատարման:***

2. ***Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը կատարվում է անհապաղ***՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ ***անհապաղ կատարման ենթակա դատական ակտի հարկադիր կատարման համար կատարողական թերթը տրվում է անհապաղ:***

Համաձայն Է. Աղայանի Արդի հայերենի բացատրական բառարանի՝ Անհապաղ նշանակում է՝ անհետաձգելի, շտապ, շուտափույթ, առանց համաղման, ***անմիջապես իսկույն:***

Այսպիսով՝ վերը շարադրված հոդվածների վերլուծությունը ենթադրում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը կատարվում է անհապաղ, այսինքն՝ դրա հիման վրա տրվող կատարողական թերթը պետք է տրվի անհապաղ, այսինքն՝ ըստ է. Աղայանի բացատրական բառարանի անմիջապես՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասը և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 10-րդ մասը, սակայն թիվ ԵԴ/26033/02/20 քաղաքացիական գործով դատարանի կողմից տրված կատարողական թերթի ուսումնասիրության արդյունքում, պարզ է դառնում, որ ***16.09.2020թ. կայացված հայցի ապահովման միջոց կիրառելու որոշման հիման վրա կատարողական թերթ տրվել է 02.10.2020թ., այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 10-րդ մասի խախտմամբ:***

Այնուհետև, Դատարանի կողմից արդեն իսկ օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ***02.10.2020թ.*** տրված կատարողական թերթը ուղարկվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ***13.10.2020թ.***, ինչի մասին վկայում է ***կատարողական թերթի վրա 13.10.2020թ. դրված էլեկտրոնային ստորագրությունը,*** այսինքն՝ կրկին օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, այն է՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված ժամկետում դատարանը կատարողական թերթ***

<u>տալիս է՝ այն անհապաղ էլեկտրոնային եղանակով ուղարկելով հարկադիր կատարման ծառայություն:</u>

<u>Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Դատարանի կողմից թիվ ԵԴ/26033/02/20 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու, հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշում կայացնելու և դրա հիման վրա կատարողական թերթ տրամադրելու օրենքով սահմանված ժամկետների խախտման արդյունքում «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն լիազորված մարմնի կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից հանվել է 21.10.2020թ., ինչն էլ պատճառ է հանդիսացել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի 19.10.2020թ. հայտը մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու համար՝ հանգեցնելով Ընկերության «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավունքի խախտմանը:</u>

Վերոգրյալի հաշվառմամբ արձանագրում եմ, որ 16.09.2020թ. առկա է եղել օրինական ուժի մեջ մտած և անհապաղ կատարման ենթակա դատական ակտ, համաձայն որի՝ պարտավորեցվել է ՀՀ ֆինանսների նախարարությանը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից հանել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ինչն Ընկերության մոտ ստեղծել է իրավական ակնկալիք առ այն, որ առնվազն մինչև «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/5Ն» ծածկագրով գնման ընթացակագին հայտ ներկայացնելը՝ 19.10.2020թ., (դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց 33 օր անց) հանված կլինի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից. այսպիսով, հաշվի առնելով սույն որոշմամբ արձանագրված փաստերն ու հանգամանքները, գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից 30.10.2020թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2020/5Ն» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 27.10.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**